Հաստատում եմ

Տնօրեն՝ [illegible]

«31» 08.2022թ.

Ախթալայի թիվ 2 միջն. դպրոցի

9-րդ դասարանի դասղեկի

# Աշխատանքային պլան

Դասղեկ՝ Ն. Ջելիկով

2022-23 ուստարի

## ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

2022- 23 ուստարում 9-րդ դասարանում սովորում են 13 աշակերտ, որոնցից 8 տղա և 5 աղջիկ: Աշակերտներիը ապահովված են դասագրքերով: Դասարանում կան սոցիալապես անապահով, նպաստառու ընտանիքների երեխաներ: Դասարանում կատարվում են տարբեր բնույթի կազմակերպչական աշխատանքներ՝ ապահովելով ջերմ և համերաշխ մթնոլորտ: Դասարանում վերընտրվել է ավագ Միլենա Հանիսյանը: Երեխաները ընկերասեր են, պատրաստակամորեն կատարում են ուսուցչի հանձնարարությունները:

### 2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Պետք է հետևել դասարանի սանիտարական վիճակին: Շաբաթական 1 ժամ անցկացնել դասղեկի ժամ: Հրավիրել ծնողական ժողովներ, ընտրել ծնողխորհուրդ, ծնողխորհրդի նախագահ և անդամներ: Ամրապնդել ծնող-աշակերտ-ուսուցիչ կապը: Կազմակերպել ուսման մեջ հետ մնացողների փոխօգնություն, իրականացնել անձի համակողմանի և ներդաշնակ զարգացմանը ուղղված քայլեր: Մեծ ուշադրություն դարձնել առաջադիմության բարձրացմանը, անհատի և կոլեկտիվի ձևավորմանը՝ հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները: Հետևել սովորողների ֆիզիկական և մտավոր առողջության պահպանմանը: Կազմակերպել հայրենասիրական ուղղվածության և մշակութային արժեքներին ծանոթացնող էքսկուրսիաններ:

### 3 ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

#### 3.1 Հոգևոր դաստիարակություն

Երեխաների մեջ պետք է սերմանել մեծ սեր հարենիքի , կրոնի և եկեղեցու նկատմամբ: Կարևորել եկեղեցու և կրոնի դերը անձի դաստիրակության և արժեքային համակարգի ձևավորման մեջ: Երեխաներին սովորեցնել, որ մշակութային արժեքները փոխանցվում են հոգևոր դաստիրակության միջոցով:

3.2. Գեղագիտական դաստիարակությունէքսկուրսիաների, արշավների միջոցով երեխաների մոտ ձևավորել գեղագիտական գիտակցություն, գեղարվեստական ճաշակ և, որ շրջակա միջավայրում կարողանան տեսնել գեղեցիկը, բարին : Կարողանան գեղեցիկի ոլորտում դրսևորվել և այն ստեղծել:

3.3 Ֆիզիկական դաստիարակություն

Ֆիզիկական դաստիարակությունը առաջին հերթին ուղղված է առողջության ամրապնդմանը, օրգանիզմի ձևի և ֆունկցիաների ներդաշնակ զարգացմանը, ճիշտ կեցվածքի ձևավորմանը: Հետևաբար աշակերտները պետք է միշտ պատրաստակամ մասնակցեն ֆիզկուլտուրայի դասերին, որպեսզի կարողանան ձևավորել կամային բարձր որակներ:

3.4 Աշխատանքային դաստիարակություն

Աշխատանքային դաստիարակությունը կարևոր գործունեություն է: Պետք է աշակերտի մոտ ձևավորել աշխատանքի հանդեպ ճիշտ վերաբերմունք, աշխատանքին հոգեբանորեն նախապատրաստել , քանի որ դրա միջոցով է երեխան փորձում ինքնահաստատվել, շփվել մեծահասակների հետ, ձևավորել սեփական եսը , մասնագիտական կողմնորոշում ձեռք բերել:

3.5 Բնապահպանական դաստիարակություն

Պետք է գիտակցեն, որ առանց բնության կյանք չկա, սիրեն բնությունը, դառնան նրա մի մասնիկը, հոգատար վերաբերմունք դրսևորեն բնության նկատմամբ, մասնակցեն ծառատունկերին, կանաչապատման աշխատանքներին, <<մաքուր բնություն>> ծրագրերին, հաճախակի լինեն բնության գրկում:

4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Հետևաբար պետք է ստեղծել ամուր կապ ուսուցիչ-աշակերտ-ծնող փոխհարաբերություններում:

Ծանոթանալ աշակերտների ընտանեկան կարգավիճակին:

## ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուսումնական շաբաթները | Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը |
|---|---|
| 1 | Կորոնավիրուսի շրջանակներում հիգիենայի կանոնների պահպանելու անհրաժեշտություն |
| 2 | Աղբադարձ Վիկտոր Համբարձումյանի անցած ուղին |
| 3 | Զրույց նվիրված Անկախության օրվան |
| 4 | Զրույց <<Ուսուցչի դերը մեր կյանքում >> թեմայով |
| 5 | Զրույց <<Թարգմանչաց տոնի>> մասին |
| 6 | Կազմակերպչական հարցեր, սանիտարական օր |
| 7 | Զրույց <<Աշունը մեր փողոցում>> թեմայով |
| 8 | Զրույց <<Ծխախոտի վնասակար ազդեցությունը>> թեմայով |
| 9 | Զրույց <<Ինչպես պաշտպանվել բնական աղետների դեպքում>> թեմայով |
| 10 | Զրույց <<Ինչպես օգտակար լինել շրջապատի մարդկանց>> թեմայով |
| 11 | Զրույց <<Ինչպես ենք պատրաստվում նշել ծննդյան տոները>> թեմայով |
| 12 | Առաջին կիսամյակի արդյունքների քննարկում |
| 13 | Տարբեր սերունդների անխուսափելի բախումներ և դրանց ճիշտ հանգուցալուծումները |
| 14 | Առաջին կիսամյակի ուսումնական արդյունքների վերանայում: |
| 15 | Մեդիագրագիտություն |
| 16 | Հայրենի'ք,ես զարկն եմ քո բազկի: |
| 17 | Հայոց բանակ |
| 18 | Մարմնակրթություն, առողջապահություն |
| 19 | Հիգիենիկ հարցեր |
| 20 | Մարդկային արատներ |
| 21 | Մեդիագրագիտություն |
| 22 | Բարոյական արժեքներ, որ իմաստավորում են մեր կյանքը: |

| | |
|---|---|
| 23 | Ո՞վ է հոգեպես հարուստ իմ կարծիքով: |
| 24 | Սերը որպես տիեզերական զգացմունք: |
| 25 | Հայրենի'ք,ես զարկն եմ քո բազկի: |
| 26 | Մարմնակրթություն, առողջապահություն: |
| 27 | Հիգիենիկ հարցեր: |
| 28 | Հանճարները սիրո մասին:Սերը ոգեշնչման աղբյուր: |
| 29 | Ինքնատիրապետման մի քանի հարցեր: |
| 30 | Հայոց Ցեղասպանություն: Հույս և հավատ սեփական ուժերի հանդեպ: |
| 31 | Հաղթանակների ամիս մայիս: |
| 32 | Մեղիագրագիտություն. Քչերը գիտեն, շատերը չգիտեն(հետաքրքիր տեղեկություններ): |
| 33 | Ո՞րն է իրական գեղեցկությունն ու հմայքը: |
| 34 | Ամփոփիչ դաս: |